ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.01.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/205

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ի ներկայացուցիչ

Գ. Վարդանյանի (լիազորագիր տրված՝ 17.01.2020թ.)

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի ներկայացուցիչ՝

Ռ. Մեհրաբյանի (լիազորագիր տրված՝ 17.01.2020թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.12.2019թ. թիվ 26/26-1/21199-2019 գրությամբ «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի 17.12.2019թ. թիվ 01/13.1/2319 գրության հիման վրա, 20.12.2019թ. թիվ 26/26-1/21199-2019 գրությամբ նախաձեռնել է «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ կետի դրույթներով, սույնով ներկայացվում է «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Ընկերություն) միջանկյալ դիրքորոշում-առարկությունը.

Ըստ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի «առողջության ապահովագրական ծառայության» թիվ 2 արձանագրության՝ հրավերի 7.9 կետի հիման վրա 1 աշխատանքային օրով կասեցվել է նիստը և առաջարկվել է մասնակիցներին սահմանված ժամկետում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները: Անհամապատասխանություններից մեկը՝ Ընկերության կողմից ներկայացված ISO 9001:2015 որակի համապատասխանության սերտիֆիկատի վավերականության ժամկետի լրացված լինել է եղել:

Ընկերությունը ստանալով վերը նշված արձանագրությունը 1 աշխատանքային օրվա ընթացքում չի կարողացել շտկել նշված թերությունները, քանի որ նշված ժամանակահատվածը ողջամիտ չի եղել, հետևաբար անհնար է եղել 1 աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովին տրամադրել պահանջվող սերտիֆիկատը:

Ընկերությունը նշել է, որ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ISO 9001:2015 որակի համապատասխանության վավեր սերտիֆիկատ չներկայացնելը անմիջականորեն կապված է եղել երրորդ անձի հետ, մասնավորապես՝ Ընկերությանը համապատասխան որակավորման սերտիֆիկատ տրամադրող իրավաբանական անձի հետ, ով պետք էր մինչև սերտիֆիկատի ժամկետի լրանալը ձեռնարկեր անհրաժեշտ բոլոր գործողությունները Ընկերությանը նոր վավեր սերտիֆիկատ տրամադրելու համար:

ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի «առողջության ապահովագրական ծառայության» թիվ 3 արձանագրության՝ Ընկերության հայտը մերժվել է և համաձայն հրավերի 7.16 կետի հինգ աշխատանքային օրվա ընթացքում լիազորված մարմին պետք է գրավոր ուղարկվի մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը 17.12.2019թ-ին թիվ 01/13.1/2319-19 գրությամբ ՀՀ Ֆինանսների նախարարի առաջին տեղակալին հայտնել է, որ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 ծածկագրով առողջության ապահովագրման գնման ընթացակարգում հայտ է ներկայացրել մեր Ընկերությունը: Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Ընկերության կողմից ներկայացված ISO 9001:2015 որակի համապատասխանության սերտիֆիկատը վավեր չէ և մասնակցին տրված մեկ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված թերությունը չի շտկել:

ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության պետ Սերգեյ Շահնազարյանը 20.12.2019թ-ին գրություն է ուղարկել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանին խնդրելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ապահովել ընթացքը:

Ընկերությունը 27.12.2019թ-ին էլեկտրոնային եղանակով ստացել է գրություն այն մասին, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը 20.12.2019թ-ին թիվ 26/26-1/21199-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված դիմումով միաժամանակ առաջարկվել է հնարավորինս սեղմ ժամկետներում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշում:

Ընկերությունը 10.01.2020թ-ին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին էլեկտրոնային եղանակով ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով խնդրել է Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության մեջ նշված թերությունների շտկման անհնարինությունը անմիջականորեն կապված է եղել երրորդ անձի անգործության հետ:

Հետագայում՝ 15.01.2020թ-ին Ընկերությունը gnumner.am կայքի միջոցով տեղեկացել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.01.2020թ-ի թիվ ՍՑ-ՆԳ-2019/205 միջանկյալ որոշման մասին, որի համաձայն՝ Ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2019/205 ընթացակարգի քննության ժամկետը երկարաձգել 10

օրացույցային օրով և ՀՀ գնումների հետ կապված բողոքները քննող անձի որոշման հրապարակման վերջնաժամկետ սահմանվել է 18.01.2020թ. ներառյալ:

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ (այսուհետ՝ Պոլիտեխնիկ) թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 ծածկագրով հրավերի համաձայն՝ հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար պահանջվում է հետևյալ լիցենզիան. ըստ առողջության ապահովագրման ոլորտի՝

Չափաբաժինների համարները	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1	«Ոչ կյանքի» ապահովագրություն իրականացնելու լիցենզիա
	ISO 9001:2015 որակի համապատասխանության սերտիֆիկատ

Պոլիտեխնիկի թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 ծածկագրով հրավերի 4.3 կետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն, որը ներառում է՝

ա) հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

բ) հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր տվյալների համապատասխանության մասին, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում որակավորումը հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը.

գ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

դ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

ե) այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի,

փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն ենթակետում մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում.

զ) մասնակցի հարկ վճարողի հաշվառման համարը և էլեկտրոնային փոստի հասցեն.

2) իր կողմից հաստատված գնային առաջարկ.

3) սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը.

4) գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով:

5) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Այսպիսով՝ թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 հրավերի համաձայն ծառայությունների մատուցման համար պահանջվում է առողջապահության ապահովագրման ոլորտի լիցենզիայի առկայություն՝ «Ոչ կյանքի» ապահովագրություն իրականացնելու լիցենզիա, ինչպես նաև ISO 9001:2015 որակի համապատասխանության սերտիֆիկատ:

Ըստ էության թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 հրավերով չի պահանջվել վավեր սերտիֆիկատի առկայություն, այլ ուղղակի սահմանված է եղել պահանջվող լիցենզիայի տեսակը:

Տվյալ դեպքում թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 հրավերի մասնակիցների համար վավեր սերտիֆիկատի առկայության պարտադիր պահանջ չի սահմանվել, հետևաբար՝ Ընկերությունը հանձնաժողովին ներկայացրել է ISO 9001:2015 որակի համապատասխանության սերտիֆիկատը:

Ավելին՝ թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ն հայտով չի ներկայացրել ISO 9001:2015 որակի համապատասխանության սերտիֆիկատ, «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված ISO 9001:2015 որակի

համապատասխանության սերտիֆիկատի վավերականության ժամկետը լրացած է եղել, մեր Ընկերության կողմից ներկայացված ISO 9001:2015 որակի համապատասխանության սերտիֆիկատի վավերականության ժամկետը լրացած է եղել, «Ռոսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից լիազորագրի փոխարեն ներկայացված է եղել հրաման, այս ամենը վկայում է այն մասին, որ թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 հրավերով հստակ չի նշվել վավեր սերտիֆիկատի պարտադիր առկայության մասին:

Ընկերությունը նշել, որ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ISO 9001:2015 որակի համապատասխանության վավեր սերտիֆիկատ չներկայացնելը անմիջականորեն կապված է եղել երրորդ անձի հետ, մասնավորապես՝ Ընկերությանը համապատասխան որակավորման սերտիֆիկատ տրամադրող իրավաբանական անձի հետ, ով պետք էր մինչև սերտիֆիկատի ժամկետի լրանալը ձեռնարկեր անհրաժեշտ բոլոր գործողությունները Ընկերությանը նոր՝ վավեր սերտիֆիկատ տրամադրելու համար:

Ավելին, Ընկերությունը ISO 9001:2015 որակի համապատասխանության վավեր սերտիֆիկատ ունենալու համար բանակցություններ է վարել սերտիֆիկատ տրամադրած «Ասատրյանս» ՍՊԸ-ի հետ, սակայն հնարավոր չի եղել բանակցությունների միջոցով ձեռք բերել նոր վավեր ISO 9001:2015 որակի համապատասխանության սերտիֆիկատ, հետևաբար Ընկերությունը իր իրավունքները պաշտպանելու համար դիմել է դատարան:

Ընկերությունը նշել է, որ եթե Պոլիտեխնիկի կողմից հայտարարված թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 հրավերի մեջ հստակ սահմանված լիներ պարտադիր պայման վավեր ISO 9001:2015 որակի համապատասխանության սերտիֆիկատի տրամադրման վերաբերյալ, ապա Ընկերությունը թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 հրավերի շրջանակներում հայտ չէր ներկայացնելու:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Նույն հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 հրավերի 7.9 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 հրավերի 7.10 կետի համաձայն՝ Եթե սույն հրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Վերը նշվածից հետևում է, որ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ, այն է՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան և սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը, ապա մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Տվյալ դեպքում եթե թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ սահմանված անհամապատասխանությունը Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի շտկել, ապա Ընկերության հայտը պետք է գնահատվի անբավարար և մերժվեր:

Սակայն անհասկանալի պատճառով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի ու թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 հրավերի պահանջների խախտմամբ՝ թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 3 արձանագրությամբ սահմանել է, որ Ընկերության նկատմամբ անհրաժեշտ է կիրառել հրավերի 7.16 կետը, ինչի արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարությունը 20.12.2019թ-ին թիվ 26/26-1/21199-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ընկերությունը գտնում է, որ թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը և ՀՀ ֆինանսների նախարարությունը 20.12.2019թ-ին թիվ 26/26-1/21199-2019 գրությունը անհիմն են և ոչ իրավաչափ, քանի որ Ընկերության կողմից թիվ 2 արձանագրությամբ սահմանված անհամապատասխանությունը չշտկելը ինքնին հիմք չէ Հավերի 7.16 կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված պահանջները կիրառելու համար, հետևյալ պատճառաբանությամբ.

Թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 հրավերի 7.13 կետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝

4) համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 հրավերի 7.14 կետի համաձայն՝ Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը սույն հրավերի 7.13-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը հիշյալ ենթակետով սահմանված ժամկետում ուղարկում է հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ սույն հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 հրավերի Հավելված N 1 գնանշման հարցմանը մասնակցելու Դիմումի 1-ին կետի համաձայն՝ բավարարում է «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2»* ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 հրավերի 7.16 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ: Ընդ որում, եթե մասնակցի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը կիրառվում է այն մասնակիցների համար որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, տվյալ դեպքում Ընկերությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված չի եղել:

Ընդ որում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց, գնման հայտերը բացելուց հետո մասնակիցը հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, ապա այս պարագայում խոսքը գնում է գնանշման հարցման հրավերով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի

կողմից հաղթող ճանաչվելուց հետո «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա), բ), գ) ենթակետերը խախտելու մասին, տվյալ դեպքում Ընկերությունը առաջին տեղի չի զբաղեցրել, պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը չի խախտել, չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից, այլ թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ սահմանված անհամապատասխանությունը Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի շտկվել, ուստի տվյալ պարագայում հանձնաժողովը կարող էր միայն Ընկերության հայտը գնահատեր անբավարար և մերժեր:

Ամփոփելով վերոգրյալը ակնհայտ է դառնում, որ թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության կողմից թիվ 2 արձանագրությամբ սահմանված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովը իրավունք չուներ կիրառեր թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 հրավերի 7.16 կետը, այլ պետք է կիրառեր թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 հրավերի 7.10 կետը:
Ավելին՝ թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 հրավերի մեջ առկա չէ որևէ սահմանում այն մասին, որ հանձնաժողովին պետք է ներկայացվի վավեր ISO 9001:2015 որակի համապատասխանության սերտիֆիկատ, հետևաբար գտնում ենք, որ Ընկերությունը որևէ խախտում թույլ չի տվել, որը կհանգեցներ թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 հրավերի 7.16 կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի կիրառմանը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/205 ընթացակարգի շրջանակներում 20.01.2020թ. ժամը 11:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.12.2019թ. թիվ 01/13.1/2319 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի կողմից 2019 թվականի նոյեմբերի 28-ին հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-

20/2» ծածկագրով առողջության ապահովագրման գնման ընթացակարգում հայտ է ներկայացրել «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ն:

Գնահատող հանձնաժողովը՝ բացման նիստի ընթացքում արձանագրել է, որ «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ի կողմից ներկայացված ISO 9001:2015 որակի համապատասխանության սերտիֆիկատը վավեր չէ: Մասնակցին տրված մեկ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված թերությունը չի շտկվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/205 ընթացակարգի շրջանակներում 20.01.2020թ. ժամը 11:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/205 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

1. ՍՑ-ՆԳ-2019/205 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.
2. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ն:
3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ի կողմից ներկայացված ISO 9001:2015 որակի համապատասխանության սերտիֆիկատի վավերականության ժամկետը լրացել է:
4. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշվել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունը:
5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.12.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Հրավերի 7.10-րդ կետը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս ISO 9001:2015 որակի համապատասխանության վավեր սերտիֆիկատ չի ներկայացրել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2019թ. թիվ 26/26-1/21199-2019 գրությունը, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի 17.12.2019թ. թիվ 01/13.1/2319 գրությունը և կից փաստաթղթերը, Ընկերության կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Ընթացակարգի հրավերի 7.9 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա

հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 7.10 կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 1-ին կետի 1.1 ենթակետով սահմանվել է, որ սույն հրավերով նախատեսված ***ծառայությունների մատուցման համար պահանջվում է*** հետևյալ լիցենզիան՝ ըստ առողջության ապահովագրման ոլորտի՝

Հ/հ	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1	«Ոչ կյանքի» ապահովագրություն իրականացնելու լիցենզիա
	ISO 9001:2015 որակի համապատասխանության սերտիֆիկատ

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ի կողմից ներկայացված ISO 9001:2015 որակի համապատասխանության սերտիֆիկատի վավերականության ժամկետը լրացել է:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշվել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.12.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Հրավերի 7.10-րդ կետը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս ISO 9001:2015 որակի համապատասխանության վավեր սերտիֆիկատ չի ներկայացրել:

Այսպիսով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: <u>Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջի համաձայն՝ ծանուցվելով արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ, համապատասխան շտկում չի իրականացրել, մասնավորապես՝ չի ներկայացրել «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար պահանջվող ISO 9001:2015 որակի համապատասխանության վավեր սերտիֆիկատ, ներկայացրել է ոչ վավեր սերտիֆիկատ, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով Կարգի 42-րդ կետով, մերժելով Ընկերության հայտը գործել է իրավաչափ:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ

առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Այսպիսով՝ Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը իմպերատիվ կերպով սահմանում է, որ եթե մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Դրա հետ մեկտեղ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով հստակ սահմանվում է, որ ***<u>մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:</u>***

Վերոգրյալով պայմանավորված, գտնում եմ, որ Ընկերությունը, մասնակցելով «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և չներկայացնելով ISO 9001:2015 որակի համապատասխանության վավեր սերտիֆիկատ, խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է Ընկերության՝ Ընթացակարգին մասնակցության հետագա դադարեցմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ինչ վերաբերվում է Ընկերության այն դիտարկմանը, որ Ընկերության կողմից թիվ 2 արձանագրությամբ սահմանված անհամապատասխանությունը չշտկելը ինքնին հիմք չէ Հավերի 7.16 կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված պահանջները կիրառելու համար, ապա գտնում եմ, որ նման պնդումն անհիմն է, քանի որ Ընթացակարգի հրավերի 7.16-րդ և Կարգի 45-րդ կետերով հստակ սահմանվում է, որ ***<u>Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու</u> օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր***

ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: ***Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝***

ա. ***խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը***, ***որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը***,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ***գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում Գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝*** առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ինչ վերաբերվում է, Ընկերության այն դիտարկմանը, որ Ընկերության կողմից ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ISO 9001:2015 որակի համապատասխանության վավեր սերտիֆիկատ չներկայացնելն անմիջականորեն կապված է եղել երրորդ անձի հետ, մասնավորապես՝ Ընկերությանը համապատասխան որակավորման սերտիֆիկատ տրամադրող իրավաբանական անձի հետ, ով պետք էր մինչև սերտիֆիկատի ժամկետի լրանալը ձեռնարկեր անհրաժեշտ բոլոր

գործողություններն Ընկերությանը նոր՝ վավեր սերտիֆիկատ տրամադրելու համար, ապա սույն մասով անհրաժեշտ եմ համարում արձանագրել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, ***իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է***:

Գնման գործընթացին մասնակցելը, որը սկսվում է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու պահից, հանդիսանում է մասնակցի իրավունքը: Միևնույն ժամանակ մասնակիցը գնման գործընթացի շրջանակներում ստանձնում է որոշակի պարտականություններ:

Այսպիսով արձանագրում եմ, որ «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ-ն ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացնելով իրացրել է իր իրավունքը և ստանձնել է որոշակի պարտականություններ, ուստի անկախ հանգամանքներից վերջինս է կրում Ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթերը սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնելու պարտականությունը, այլ ոչ թե՝ երրորդ անձ, որը որևէ պարտականություն չի ստանձնել սույն գնման գործընթացի շրջանակներում:

Ինչ վերաբերվում է Ընկերության կողմից ներկայացված այն պնդմանը, որ եթե Պատվիրատուի կողմից հայտարարված թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 հրավերի մեջ հստակ սահմանված լիներ պարտադիր պայման վավեր ISO 9001:2015 որակի համապատասխանության սերտիֆիկատի տրամադրման վերաբերյալ, ապա Ընկերությունը թիվ ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 հրավերի շրջանակներում հայտ չէր ներկայացնի, ապա գտնում եմ, որ նման պնդումն լիովին անհիմն է, քանի որ անտրամաբանական է, որ հրավերով պետք է պահանջվեր մի փաստաթուղթ, որն անվավեր է և որևէ իրավական ուժ չունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.12.2019թ. թիվ 26/26-1/21199-2019 գրությամբ «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**